ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0095, Մարշալ Բաղրամյան պողոտա 19 Հեռ.՝ 011 513-645

06.08.2021թ

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ Շուշան Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 04.08.2021 թ. տեղեկատվություն ստանալու հարցման հայտնում ենք.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով և «ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող կանոնները հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ի դրույթներով, իրականացնում է ԱԺ-ում հավատարմագրված լրագրողների աշխատանքների համակարգում:

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ տեղեկացնում ենք, որ ԱԺ-ում հավատարմագրված լրագրողների գործունեությունը կարգավորող իրավական հիմքերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝ https://bit.ly/3xpsLtN, https://bit.ly/2WILI3d :

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ